խատաւորների յիշատակի առաջ, միանում է ընդհանուր ցանկութեան, որ նորից վերածնվի հայ գրականութեան և կուլտուրայի ոսկեդարը։

Նախագահ՝ Միքայէլ Պապաջանեան

—

Թիֆլիս, 13 հոկտ.

Նորաշէնի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցչութիւնը և աշակերտութիւնը հոգեզմայլման խորին զգացումով դէպի եկեղեցու հայրերը, որոնք տուին այբուբեն՝ մայրենի լեզուով լսելու ս. Գրոց ընթերցումը, և դէպի տպագրութեան վաստակաւորները, արտայայտում են Ձեր Սրբութեան անկեղծ շնորհաւորութիւններ հայերի կուլտուրական վերածնութեան այդ հազուագիւտ հանդէսի համար։

Աւագ-քահանայ Շիօյեան և հոգաբարձու Քիշմիշեան

—

Սղնախ, 13 հոկտ.

Սղնախի հայ հոգևորականութիւնը, հասարակութիւնը, հոգաբարձութիւնը և ուսուցչական մարմինը յղում են սրտագին շնորհաւորութիւններ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով. կատարվեց հանդիսաւոր եկեղեցական թափօր և հոգեհանգիստ հանգուցեալ վաստակաւորների յիշատակին։ Դպրոցի ֆոնդը ընդունված է համակրութեամբ։

Գործակալ՝ տէր-Եղիշէ

Նախագահ հոգաբարձութեան՝ Ենիկոլոպեան

Աւագ-ուսուցիչ՝ Ղազարեան

—

Ղաթարի Հանք, 13 հոկտ.

Կովկ. Հայոց Բար. Ընկերութեան Ղաթարի ճիւղը շնորհաւորում է հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի տօնախմբութիւնը և ցանկանում է ամբողջ հայ ժողովրդին բարգաւաճումն կուլտուրայի մէջ։

—

Թիֆլիս, 14 հոկտ.

Երէկ, տօնախմբութեան առիթով, ծխական դպրոցների ամբողջ ուսուցչական մարմինը, աշակերտները, աշակերտուհիները ներկայ եղան Վանքի եկեղեցում հոգեհանգստին և հայրապետական մաղթանքին։

Թեմական տեսուչ՝ Տէր-Միրաքեան

—

Երևան, 13 հոկտ.

Համակված երկիւղածութեամբ իր մեծ վերածնիչների յիշատակի առաջ՝ ի դէմս Ձեր Վեհափառութեան շնորհաւորում եմ եկեղեցուն՝ ազգային յոբելեանի համար։

Ց. Սաղաթելեան

(Կը շարունակվի)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱԻԱՌՈՒՄ

I

Գանձակ, 14 հոկտեմբերի

Այսօր քաղաքիս ս. Լուսաւորիչ եկեղեցում պատարագից յետոյ կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ 1500 և 400-ամեակների յոբելեանների առիթով, ապա մաղթանք Նորին Վեհափառութեան արեշատութեան համար։ Պատարագին, հոգեհանգստին և մաղթանքին ներկայ էին քաղաքիս բոլոր հայ հոգևորականութիւնը, խուռն երկսեռ բազմութիւն քաղաքացիների, հայոց ծխական դպրոցների երկսեռ սաները իրանց ուսուցիչ-ուսուցչուհիների և հոգաբարձուների հետ միասին, այլ և պետական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները։ Պատարագի սկզբից ներկայ էին և ռուսաց միջնակարգ դպրոցի տեսչուհի Ն. Մ. Սեմեօնօվան և կրօնուսուցիչ համալսարանաւարտ հայր Նեստորը։ Հոգեհանգստից առաջ փոխանորդ հայր Լևոնը զգացված խօսեց տառերի գիւտի և տպագրութեան նշանակութեան և օրվայ հերոս սրբազան հայրերի թողած անմահ գործերի մասին։ Հանդէսը վերջացաւ ցերեկվայ ժամը 1-ին, թողնելով ներկայ եղողների վրա մեծ տպաւորութիւն։ Երէկ, շաբաթ օրը, ամսիս 13 ին դասերից ազատ էին բոլոր ծխական դպրոցների սաները և ս. Յովհաննէս եկեղեցում տօնի առիթով պատարագ մատուցվեց։

Գ. Ք. Թ.

II

Կարս, 14 հոկտեմբերի

Նորին Վեհափառութեան կարգադրութեան և էջմիածնի յանձնախմբի տված և տարածած ծրագրին համաձայն՝ ամսիս 13-ին և 14-ին ս. Աստուածածին եկեղեցում այդ առիթով պատարագ էր։

Մ. ա. ք. Տէր-Պետրոսեանցը թէ 13-ին և թէ 14-ին այդ երկու տօների նշանակութիւնը բացատրեց հանդիսականներին։

Հայոց դպրոցի ուսուցիչները, վարժուհիները և հոգաբարձուները իրանց երկսեռ աշակերտներով ներկայ էին պատարագներին։ Ներկայ էին նաև ռէալական, գիմնազիայի, արհեստաւորաց և քաղաքային դպրոցի հայ աշակերտները իրանց ուսուցիչներով։ Առաջին երեք դպրոցների աշակերտները միայն 13 ի նախատօնակին երևացին։ Իսկ քաղաքային դպրոցի աշակերտները իրանց հայ ուսուցիչներով կիրակի, պատարագից յետոյ, հայոց դպրոցի աշակերտների հետ միացան և գնացին դպրոցը՝ մասնակցելու աշակերտական հանդէսին։ Չը նայելով որ ուսուցիչների ծրագրով այդ օրը միմիայն զուտ աշակերտական հանդէս պիտի լինէր, բայց և այնպէս մի քանի տիկիններ և պարոններ մտել էին հանդիսի դահլիճը և առաջին կարգերում նստել։ Հանդէսը բաց արեց հոգաբարձու պ. Հ. Նոհրատեանց մի ոգևորված ատենաբանութեամբ, և բացատրեց տառերի գիւտի ու տպագրութեան նշանակութիւնը, ս. Մեսրոպի և Գուտտենբերգի կատարած դերերը և նրանց տուած օգուտները։ Սրանից յետոյ աշակերտները երգեցին «Հայր մերը» և սկսվեց աշակերտական հանդէսը։

Աշակերտներից ոմանք կարդացին, ոմանք պատմեցին զուարճալի դէպքեր, պատմուածքներ, և մէջ ընդ մէջ երգեցիկ խումբը գեղեցիկ և աւուր պատշաճի երգերով զբաղեցնում և մեծ բաւականութիւն էր պատճառում հանդիսականներին։

Տօնի նշանակութեան մասին խօսեցին աւագ ուսուցիչ Գիւլնազարեանցը և Գ. Տէր-Ռուբինեանցը, բացատրելով այդ տօների կրթական կուլտուրական նշանակութիւնը և անմահ Մեսրոպի և Գուտտեմբերգի մարդկութեան համար արած անգնահատելի ծառայութիւնը։

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

—

Բագու, 15 հոկտեմբերի

Ամսիս 12-ին, ուրբաթ երեկոյեան, հանդիսաւոր նախատօնակ կատարվեց տեղիս ս. Լուսաւորիչ մայր եկեղեցում, ի յիշատակ ս. Թարգմանչաց։ Հայոց եկեղեցու մեծ զանգի ղօղանջիւնը անհագին բազմութիւն էր հրաւիրել։ Նոյն ամսի 13-ին, շաբաթ օր, հանդիսաւոր պատարագ ու հոգեհանգիստ կատարվեց ս. Թարգմանչաց համար, որի առիթով քարոզ խօսեց Ղուկասեան քահանան։ Եկեղեցին լիքն էր զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներով և ծխական-եկեղեցական երկսեռ դպրոցների աշ.-աշակերտուհիներով և ուսուցչական ամբողջ կազմով։ Նոյն ամսի 14-ին, կիրակի օր, հանդիսաւոր պատարագից յետոյ, կաթողիկոսական մաղթանք կատարվեց։ Քարոզ խօսեց Գեղամեան քահանան։ Եկեղեցական հանդէսները կատարվում էին աւագ քահ. Գրիգորեանի գլխաւորութեամբ և քահանայական ու դպիրների ամբողջ կազմով։

Ա.

—

«Каспій» լրագիրը հաղորդում է.

«Բագուի հայերի կազմակերպած յոբելեան. հանդէսները, այբուբենի 1500 ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով, անցան բազմակերպ և ոգևորութեամբ։ Շաբաթ, հոկտ. 13-ին, հայոց մայր եկեղեցում, տեղական հայ հասարակական հիմնարկութիւնների, դպրոցների հոգաբարձութիւնների ներկայացուցիչների, աշակերտութեան և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, Ղևոնդ աւագ-քահանան կատարեց պատարագ և հոգեհանգիստ տըպագրութեան և գրչի հանգուցեալ աշխատաւորների յիշատակին, որից յետոյ Ղուկասեան քահանան արտասանեց ճառ յոբելեանի նշանակութեան մասին։

«Նոյն օրը, գրական-գեղարուեստական ակումբի դահլիճում, Բագուի Հայոց Կուլտ. Միութիւնը կազմակերպեց երեկոյթ։ Այդտեղ ևս արտասանվեցին ճառեր և երգվեցին երգեր ու ոտանաւորներ։ Դահլիճը լի էր հասարակութեամբ»։

—

Նոր-Նախիջեանում հրատարակվող «Լոյս» շաբաթաթերթի մէջ կարդում ենք. «Հոկտեմբերի 13-ին, ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցու մէջ կատարվեց հոգեհանգիստ հայ գրականութեան հանգուցեալ վաստակաւորների յիշատակին։ Նոյն օրը դպրոցի մէջ տեղի ունեցաւ գրականական երեկոյթ ազգային այս մեծ տօնի առիթով։ Խօսեցին հայ գրականութեան ուսուցիչներ պ. պ. Ա. Ջամինեան և Հր. Աճառեան։ Երեկոյթին մասնակցեցին և Գոգոյեան դպրոցի աշակերտուհիները։ Նոյն օրը բոլոր ծխական հայ դպրոցների մէջ ևս կատարվեց գրական առաւօտ, մասնակցութեամբ աշակերտ-աշակերտուհիների և ուսուցչական խմբերի։ Իսկ ամսիս 10-ին Գրիգոր Չալխուշեանի նախագահութեամբ կայացաւ Բարեգործական Ընկերութեան խորհրդարանի նիստը։ Բացունելով էջմիածնի յանձնաժողովի որոշումը հոկտ. 13-ի յոբելեանների առիթով, Գրիգոր Չալխուշեանի առաջարկութեամբ ժողովը որոշեց դիմել Վեհափառ Կաթողիկոսին և խնդրել միջնորդել մինիստրութեան առաջ, Ռուսաստանի հայերի մէջ ևս թոյլտուութիւն տալ հանգանակութիւն բանալ դպրոցական ֆոնդ կազմելու համար։ Խորհրդարանը իր կողմից որոշեց մի գումար յատկացնել այդ առիթով, քանակի որոշումը թողնելով ընդհանուր ժողովին։

Կ. ԳԱՍՊԱՐԵԱՆԻ ԵՒ ԲԺՇԿ. Ա. ՋԱՐԳԱՐԵԱՆԻ ՑԱՐՈՒՑԱԾ ԴԱՏԵՐԸ

—

Ինչպէս գիտենք, Ներսիսեան դպրոցի կալուածների կառավարիչ Կ. Գասպարեան և բժշկ. Ա. Զարգարեան զրպարտութեան դատ են յարուցել Հ. Առաքելեանի դէմ, առաջինը Ներսիսեան դպրոցում կատարված զեղծումների խնդրի և երկրորդը՝ գրական ֆօնդի և յոբելեանի խնդրի առիթով։

Այդ գործի նախնական քննութիւնը նշանակված էր երէկ, Թիֆլիսի 2-րդ հաշտարար ատեանի քննիչի մօտ, համաձայն 303-րդ յօդ. դատ. օրէնսգրքի, այն է՝ հաշտութիւն կայացնելու համար։ Սակայն գանգատող Կ. Գասպարեան չէր եկել, գնացած լինելով էջմիածին։ Քննիչի առաջարկին՝ հաշտութեամբ վերջացնել գործը, Հ. Առաքելեան յայտնեց նրան, որ գործը հաստ-